ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Սարգսյան, 94
(0254) 2-22-41 tashir.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

16 մարտի 2020 թվականի N 226-Ա

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՄԲ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ և 30-րդ կետերով, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2020 թվականի մարտի 16-ի «Հայաստանի Հանրապետությունում արտակարգ դրություն հայտարարելու մասին» N298-Ն որոշումը

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Սույն թվականի մարտի 16-ից ապրիլի 14-ը ներառյալ ժամանակավորապես դադարեցնել ՀՀ Լոռու մարզի Տաշիր համայնքի ենթակայությամբ համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների և հիմնարկների գործունեությունը՝ պայմանավորված Հանրապետությունում նոր կորոնավիրուսային հիվանդության համաճարակային իրավիճակով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Է. ԱՐՇԱԿՅԱՆ**

2020թ. մարտի 16
ք.Տաշիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Սարգսյան, 94
(0254) 2-22-41 tashir.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

16 մարտի 2020 թվականի N 227-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԱՂԵՏՆԵՐԻ ՌԻՍԿԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՍՏԵՂԾՄԱՆ ՄԱՍԻՆ

ՀՀ Լոռու մարզի համայնքի բնակչության պաշտպանության համակարգի նորմալ և արդյունավետ գործունեության, աղետների ռիսկի նվազեցման միջոցառումների կազմակերպման և իրականացման, արտակարգ իրավիճակներում գործելու ընթացակարգերի սահմանման, արտակարգ իրավիճակներում համայնքի բնակիչների պաշտպանության կազմակերպման նպատակով, ղեկավարվելով «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ և 41-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետերով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1.Հաստատել ՀՀ Լոռու մարզի Տաշիր համայնքի՝

1) Խորհրդի կազմը՝ համաձայն հավելված N 1-ի:
2)Աղետների ռիսկի կառավարման խորհրդի աշխատակարգը և գործառույթները՝ համաձայն հավելված N 2-ի:

2. Որոշումն ուժի մեջ է ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Է. ԱՐՇԱԿՅԱՆ

2020թ. մարտի 16
ք.Տաշիր

Հավելված N 1

ՀՀ Լոռու մարզի Տաշիր համայնքի
ղեկավարի
«16» մարտի 2020 թ-ի N 227-Ա որոշման

ԿԱԶՄ
ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՂԵՏՆԵՐԻ ՌԻՍԿԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ

Համայնքի աղետների ռիսկի կառավարման խորհրդի կազմը՝

1. խորհրդի ղեկավար՝ Էդգար Արշակյան (համայնքի ղեկավար),
2. խորհրդի ղեկավարի տեղակալ-տարհանման և պատսպարման պատասխանատու՝ Նորայր Բաղդասարյան (համայնքի ղեկավարի տեղակալ),
3. խորհրդի քարտուղար-ազդարարման և իրազեկման պատասխանատու՝ Նունե Սոլոյան (աշխատակազմի քարտուղար),
4. խորհրդի անդամներ՝

1) ավագանու անդամ՝ Արթուր Պողոսյան ,
2) ավագանու անդամ՝ Վահրամ Բեզոյան ,
3) ավագանու անդամ՝ Հայկ Մարդոյան ,
4) բնակավայրի վարչական ղեկավարներ՝

ա. Լեռնահովիտ բնակավայրի վարչական ղեկավար՝ Գագիկ Սուքիասյան ,
բ. Մեդովկա բնակավայրի վարչական ղեկավար՝ Աշոտ Հակոբյան ,
գ. Սարատովկա բնակավայրի վարչական ղեկավար՝ Գառնիկ Մարդոյան ,
դ. Նովոսելցովո բնակավայրի վարչական ղեկավար՝ Ռուբիկ Դավոյան ,
ե. Բլագոդարնոյե բնակավայրի վարչական ղեկավար՝ Աշոտ Ավետիսյան ,
զ. Կաթնառատ բնակավայրի վարչական ղեկավար՝ Ռուբիկ Ղազարյան ,
է. Մեղվահովիտ բնակավայրի վարչական ղեկավար՝ Համեստ Շահբազյան ,
ը. Դաշտադեմ բնակավայրի վարչական ղեկավար՝ Մարինե Խոռոյան ,

5) ոլորտային պատասխանատուներ՝

ա. հրշեջ-փրկարարական աշխատանքների պատասխանատու՝ Հովսեփ Արշակյան (ՀՀ ԱԻՆ ՓԾ Տաշիր հրշեջ-փրկարարական ջոկատի հրամանատար), (համաձայնությամբ),
բ.հասարակական կարգի պահպանման պատասխանատու՝ Միհեր Վանյան (ՀՀ Ոստիկանության Լոռու մարզային վարչության Տաշիրի բաժնի պետ) ; (համաձայնությամբ),
գ. տրանսպորտային ապահովման պատասխանատու՝ Էդուարդ Սողոյան («Դիանա-Էդիտ » ՍՊԸ-ի տնօրեն) (համաձայնությամբ),
դ. կապի պատասխանատու՝ Գեորգի Տոմեյան («Վեոն Արմենիա» ՓԲԸ-ի ավագ մասնագետ) (համաձայնությամբ),
ե. բժշկական օգնության կազմակերպման պատասխանատու՝ Գեորգի Իլոյան, («Տաշիր բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի տնօրեն), (համաձայնությամբ),
զ. կենսաապահովման կազմակերպման պատասխանատու՝ Սևադա Սարգսյան (համայնքապետարանի աշխատակազմի գնումների, ծրագրերի և տնտեսական զարգացման բաժնի պետ),

է. էներգետիկ ապահովման պատասխանատու՝ Սերգեյ Սուքիասյան, («Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ « Դեբեդ» մասնաճյուղի տնօրեն) , (համաձայնությամբ),

ը. Ինժեներական միջոցառումների ապահովման պատասխանատու՝ Սլավիկ Անախասյան (համայնքապետարանի աշխատակազմի ճարտապետության, աղաքաշինության, գյուղատնտեսության և հողօգտագործման բաժնի պետ),

թ. կոմունալ ապահովման և դիակների ճանաչման, հուղարկավորման կազմակերպման ու հաշվառման պատասխանատու՝ Արմենակ Մովսիսյան (Տաշիրի քաղաքային գերեզմանատան տնօրեն) ,

ժ. անհայտ կորածների և ընտանիքի անդամների միավորման, կորած, միայնակ մնացած երեխաների ու ծերերի հարցերով զբաղվող պատասխանատու՝ Լիլիթ Ավետիկյան (համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ):

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ **Ն. ՍՈԼՈՅԱՆ**

Հավելված N 2
ՀՀ Լոռու մարզի Տաշիր համայնքի ղեկավարի
«16» մարտի 2020 թ-ի N 227-Ա որոշման

ԱՇԽԱՏԱԿԱՐԳ ԵՎ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐ
ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՂԵՏՆԵՐԻ ՌԻՍԿԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ

1. ԱՌԿ խորհրդի աշխատակարգը.

1) Սույն աշխատակարգով սահմանվում են (այսուհետ՝ Աշխատակարգ) Տաշիր համայնքի աղետների ռիսկի կառավարման (այսուհետ՝ ԱՌԿ) խորհրդի լիազորությունների և գործառույթների իրականացման ընթացակարգերը:

2) Համայնքի ԱՌԿ խորհրդի նիստերը գումարվում են Տաշիրի համայնքապետարանում, իսկ դրա անհնարինության դեպքում՝ ԱՌԿ խորհրդի ղեկավարի որոշմամբ:

3) Համայնքի ԱՌԿ խորհրդի նիստի ժամանակ քննարկվում են համայնքի ԱՌԿ պլանի մշակման, ճշգրտման և խորհրդի անդամների կողմից բարձրացված հարցերը կամ համայնքի ԱՌԿ պլանով սահմանված գործողությունների իրականացումը:

4) Համայնքի ԱՌԿ խորհրդի նիստի ժամանակ ԱՌԿ խորհրդի ոլորտային պատասխանատուները ներկայացնում են իրենց վերապահված ոլորտում կատարված աշխատանքները, առաջ եկած խնդիրները և առաջարկվող նոր միջոցառումները: Համայնքի ԱՌԿ պլանի մշակման, ճշգրտման ժամանակ պատասխանատու են իրենց ոլորտին վերաբերվող համայնքի ԱՌԿ պլանի բաժինների համար, ինչպես նաև համայնքի ԱՌԿ պլանի նախապատրաստական և արձագանքման մասերում իրենց կարգավորման ոլորտի միջոցառումների համար:

5) Համայնքի ԱՌԿ խորհրդի նիստերը գումարվում են տարվա ընթացքում առնվազն երկու անգամ, իսկ դրա անհնարինության դեպքում՝ ԱՌԿ խորհրդի ղեկավարի որոշմամբ:

6) Համայնքի ԱՌԿ խորհրդի նիստերն արձանագրվում են քարտուղարի կողմից և ներառվում են համայնքի ԱՌԿ պլանում:

1. ԱՌԿ խորհրդի ԱՌԿ նախապատրաստական գործառույթներն են՝

1) համայնքի բնակչության, նյութական արժեքների պաշտպանության ապահովումը,

2) համայնքի վտանգների, խոցելիության և կարողությունների բացահայտումը,

3) ԱՌԿ պլանի մշակումը, իրականացման ապահովումը, վերահսկումը,

4) Աղետների ռիսկի նվազեցման (այսուհետ՝ ԱՌՆ) և աղետներին դիմակայելու կարողությունների զարգացումը,

5) համայնքում ԱՌՆ միջավայրի և մշակույթի ձևավորումն ու դրանց տարածումը,

6) աղետներին արձագանքման համակարգի ձևավորումն, այդ նպատակով փրկարարական, հրդեհաշիջման և անհրաժեշտ կենսապահովման միջոցների ձեռք բերման, կուտակման և նպատակային օգտագործման իրականացումը,

7) ԱՌԿ պլանի միջոցառումների ինտեգրման ապահովումը համայնքի զարգացման ծրագրում,

8) համայնքի վաղ ազդարարման համակարգի ստեղծումն ու վերջինիս պահպանումը,

9) «Դիմակայուն համայնք» ստեղծելու նպատակով ԱՌՆ գործընթացներում ուսումնական հաստատությունների և բնակչության ակտիվ ներգրավվածության ապահովումը,

10) բնակչության համար արտակարգ իրավիճակներում վարքականոնների և պարտականությունների տարածումը, դրանց կիրառման ապահովումը,

11) նախապատրաստումը համայնքի բնակչությանը կատարելու փրկարարական և հրդեհաշիջման պարզագույն աշխատանքներ,

12) հրդեհների կանխարգելման աշխատանքների իրականացնումը՝ բնակչության իրազեկման և ուսուցման միջոցով,

13) վարժանքների կազմակերպումը և անցկացնումը

14) աղետների ռիսկի կառավարման պլանի ճշգրտումը:

3. ԱՌԿ խորհրդի ԱԻ արձագանքման գործառույթներն են՝

1) համայնքի բնակչության ազդարարման իրականացումը,

2) արտակարգ իրավիճակների ժամանակ տեղեկատվության փոխանակման իրականացումը,

3) համայնքի բնակչության տարահանման իրականացումը,

4) կազմակերպում է հատուկ կարիքավոր մարդկանց, հղի կանաց և երեխաների անվտանգ տարահանումը/պատսպարումը,

5) իր իրավասության շրջանակներում կազմակերպում է որոնման, փրկման և հրդեհաշիջման աշխատանքներ,

6) կազմակերպում է բնակչության նյութական և հասարակական արժեքների պահպանությունը, անվտանգության ապահովումը փրկարարական գործողությունների և տարահանման վայրերում,

7) դիակապտության, թալանի, բռնության և այլ հանցավոր երևույթների կանխման ապահովումը,

8) ճանապարհների մաքրման, կամուրջների վերականգնման և նոր տարանցիկ ճանապարհների հիմնման ապահովումը,

9) արտակարգ իրավիճակի հետևանքով առաջացած շինարարական աղբի մաքրման և տեղափոխման ապահովումը,

10) առաջին օգնության իրականացման ապահովումը,

11) սանիտարահիգիենիկ և համաճարակային վիճակի հսկողության ապահովումը,

12) բնակչությանը սննդով, ջրով, դեղորայքով և առաջին անհրաժեշտության պարագաներով ապահովումը,

13) ջրային և սննդամթերքի պաշարների կուտակումը և նպատակային օգտագործումը,

14) բնակչության կոմունալ-էներգետիկ ապահովումը,

15) տուժած տարածքների գազամատակարարման և էներգամատակարարման վերականգնման կազմակերպման, անհրաժեշտության դեպքում առանձին հատվածներում դրանց դադարեցման ապահովումը,

16) դիակների հուղարկավորման համար հողհատկացման և հուղարկավորման կազմակերպման ապահովումը,

17) կորած, միայնակ մնացած երեխաների հայտնաբերման, գրանցման և համապատասխան սոցիալական ծառայություններ ուղղորդման ապահովումը,

18) ընտանիքներին երեխաների վերամիավորման կազմակերպման ապահովումը,

19) աղետից հետո ստեղծված իրավիճակի, շենքերի, շինությունների, կամուրջների, թունելների և այլ առանցքային հանգույցների տեխնիկական վիճակի գնահատման կազմակերպման ապահովումը,

20) վնասի և կարիքների վաղ գնահատումը և հայտերի ներկայացումը մարզային կամ հանրապետական հանձնաժողովին:

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ **Ն. ՍՈԼՈՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Սարգսյան, 94
(0254) 2-22-41 tashir.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

17 մարտի 2020 թվականի N 228-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 21-Ի N 39-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելովելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետությնա օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. ՀՀ Լոռու մարզի Տաշիր համայնքի ղեկավարի 2020 թվականի հունվարի 21 «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքի քաղաք Տաշիր վարչական տարածքում գտնվող 06-008-0031-0020 կադաստրային ծածկագրով հողամասի նկատմամբ Վահրամ Խաչիկի Սուքիասյանի սեփականության իրավունքը ճանաչելու և Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքի ղեկավարի 2019 թվականի հունվարի 1-ի N1-Ա որոշումը ուժը կորցրած ճանաչելու մասին» N 39-Ա որոշման մեջ կատարել փոփոխություն և 3-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

3. Հողամասի վրա առկա է մինչև 50% ավարտվածության աստիճան ունեցող ինքնակամ կառուցված շինություն»:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Է. ԱՐՇԱԿՅԱՆ**

2020թ. մարտի 17
ք.Տաշիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Սարգսյան, 94
(0254) 2-22-41 tashir.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

18 մարտի 2020 թվականի N 229-Ա

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՀՈՂԱՄԱՍԻ ՎՐԱ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԽԱՆՈՒԹԻ ՄԻ ՄԱՍԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 2-րդ մասով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ, 42-րդ և 43-րդ հոդվածներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N731-Ն և 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշումները, Հայաստանի Հանրապետության 2015 թվականի ապրիլի 2-ի N 412-Ն որոշումը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի օգոստոսի 9-ի N 1034-Ն որոշումը, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թ. դեկտեմբերի 29-ի N2387-Ն որոշումով հաստատված կարգի 29-րդ կետը ա) ենթակետը, 48-րդ կետը, «Արտյոմ Սաքանյան» ԱՁ-ի կողմից կազմված հատակագիծը, հաշվի առնելով այն հանգամանքը, որ Տաշիր քաղաքի 06-008-0104-0025 կադաստրային ծածկագրով ինքնակամ կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, դրանք կառուցված չի քաղաքաշինական նորմերի ու կանոնների խախտումներով, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, հողամասը ընդգրկված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված հողերի ցանկում՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ ՝

1. Լոռու մարզ, Տաշիր համայնք, Տաշիր քաղաքի 06-008-0104-0025 կադաստրային ծածկագրով համայնքին պատկանող 3 քմ հողամասի վրա քաղաքացի Քերոբ Գևորգի Տոմերյանի կողմից ինքնակամ կառուցված 3քմ (արտաքին չափերով) կառույցի նկատմամբ ճանաչել համայնքային սեփականության իրավունքը:

2. Լոռու մարզ, Տաշիր համայնք, Տաշիր քաղաքի 06-008-0104-0025 կադաստրային ծածկագրով համայնքին պատկանող 3քմ հողամասի վրա ինքնակամ կառուցված 3քմ (արտաքին չափերով) կառույցը համարել օրինական:

3. ՀՀ Լոռու մարզի Տաշիր համայնքի վարչական տարածքում գտնվող (կադաստրային ծածկագիր՝ 06-008-0104-0025) 3քմ մակերեսով այլ հողամասերից հողամասի գործառնական նշանակությունը փոխադրել հասարակական կառուցապատման գործառնական նշանակության:

4. Հողամասի սահմանները որոշվում են Տաշիր համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծով:

5. Քերոբ Տոմերյանին առաջարկել օրինականացված կառույցը և կից հողամասը պետական գրանցում ստանալուց հետո, ուղղակի վաճառքի կարգով գնել գործող տուրքի և հողամասի կադաստրային արժեքի չափով՝

1) Խանութ -14950 (տասնչորս հազար ինը հարյուր հիսուն) ՀՀ դրամ ,
2)Հողամաս-700 (յոթ հարյուր) ՀՀ դրամ:

6. Օրինականացված կառույցին տրամադրել փոստային հասցե՝Լոռու մարզ, Տաշիր համայնք, ք. Տաշիր, 5-րդ թաղամաս, Ջահուկյան փողոց թիվ 22/2 հողամաս:

7. Սույն որոշումից ծագող իրավական հարաբերությունները ենթակա են գրանցման Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի Լոռու մարզային ստորաբաժանումում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Է. ԱՐՇԱԿՅԱՆ**

2020թ. մարտի 18
ք.Տաշիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Սարգսյան, 94
(0254) 2-22-41 tashir.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

19 մարտի 2020 թվականի N 230-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼԵՌՆԱՀՈՎԻՏ ՀԱՄԱՅՆՔԻ 06-039-0046-0001 ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՋԵՄՄԱ ԲԱՐՍԵՂԻ ՀՈՎՍԵՓՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով քաղաքացի Ջեմմա Բարսեղի Հովսեփյանի 2020 թվականի մարտի 2-ի ՄԴ-67-20 դիմումը, ՀՀ Լոռու մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի ԼԴՅ/0356/02/19 քաղաքացիական գործով 2020 թվականի փետրվարի 6-ի վճիռը և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության 64-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N2387-Ն որոշումով հաստատված կարգի 29-րդ կետի գ) ենթակետով, 48-րդ կետով: Հաշվի առնելով , որ հողամասը չի գտնվում ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, չի գտնվում Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում և այն, որ հողամասի սեփականության իրավունքի ճանաչումը չի սահմանափակում այլ անձանց իրավունքները և չի առաջացնում սերվիտուտ՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Օրենքի ուժով ճանաչել Ջեմմա Բարսեղի Հովսեփյանի սեփականության իրավունքը ՀՀ Լոռու մարզի Տաշիր համայնքի գյուղ Լեռնահովիտ վարչական տարածքում գտնվող, 06-039-0046-0001 կադաստրային ծածկագրով 0.12974 հա բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասի նկատմամբ:

2. Հողամասի սահմանները որոշվում են Տաշիր համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծով:

3. Անշարժ գույքին տրամադրել փոստային հասցե՝ ՀՀ Լոռու մարզ Տաշիր համայնք, գյուղ Լեռնահովիտ, 9-րդ փողոց, 4-րդ նրբանցք, թիվ 5 հողամաս:

4. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա է պետական գրանցման ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի Լոռիի մարզային ստորաբաժանումում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Է. ԱՐՇԱԿՅԱՆ

2020թ. մարտի 19
ք.Տաշիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Սարգսյան, 94
(0254) 2-22-41 tashir.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

19 մարտի 2020 թվականի N 231-Ա

2 ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՄԻԱՎՈՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ ԱՌԱՋԱՑԱԾ ՆՈՐ ՀԱՍՑԵԱՎՈՐՄԱՆ ՕԲՅԵԿՏԻ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 22-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N2387-Ն որոշումով հաստատված կարգի 29-րդ կետի բ) ենթակետը, 34-րդ և 48-րդ կետերը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ ՝

1. Տաշիր համայնքի վարչական տարածքում գտնվող Տիգրան Հարությունյաննին սեփականության իրավունքով պատկանող ՀՀ Լոռու մարզ, Տաշիր համայնք, ք. Տաշիր, 11-րդ թաղամաս, Երևանյան փողոց, թիվ 343 (վկայական 06022020-06-0003) և ՀՀ Լոռու մարզ, Տաշիր համայնք, ք. Տաշիր, 11-րդ թաղամաս, Երևանյան փողոց, թիվ 345 (վկայական 28022020-06-0034) հասցեներում գտնվող միավորված անշարժ գույքին տրամադրել փոստային հասցե՝ ՀՀ Լոռու մարզ, Տաշիր համայնք, ք.Տաշիր, 11-րդ թաղամաս, Երևանյան փողոց թիվ 343,345 բնակելի տուն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Է. ԱՐՇԱԿՅԱՆ**

2020թ. մարտի 19
ք.Տաշիր